

# ՄԱՆԱԾԱԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՀԱԳՈՒՄՏԵՂԵՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## Անդամները,

*վկայակոչելով*, որ նախարարները Պունտա Դել Էսթեում համաձայնեցին, որ «մանածագործվածքների և հագուստեղենի ոլորտի բանակցությունները նպատակ ունեն ստեղծելու այնպիսի եղանակներ, որոնք այս ոլորտին թույլ կտան ՄԱԳ-Հ-ի ամրապնդված կանոնների և հիմնադրույթների հիման վրա վերջնականորեն միասնական ՄԱԳ-Հ-ի հետ՝ դրանով նպաստելով նաև առևտրի հետագա ազատականացման նպատակին»,

*վկայակոչելով* նաև, որ Առևտրի բանակցությունների հանձնախմբի 1989թ. ապրիլի որոշմամբ համաձայնեցված էր, որ միասնականացման գործընթացը պետք է սկսվի Առևտրի բազմակողմ բանակցությունների Ուրուգվայի փուլի ավարտից հետո և իր բնույթով պետք է լինի առաջընթաց,

այնուհետև *վկայակոչելով*, որ համաձայնեցված էր, որ հատուկ մոտեցում պետք է տրամադրվի առավել թույլ զարգացած Անդամ երկրներին,

սույնով համաձայնեցին հետևյալի մասին.

## Հոդված 1

1. Սույն Համաձայնագրում շարադրված են դրույթներ, որոնք Անդամները պետք է կիրառեն՝ ՄԱԳ-Հ-1994-ի հետ մանածագործվածքների և հագուստեղենի ոլորտի միասնականացման անցումային փուլի ընթացքում:

2. Անդամները համաձայնում են 2-րդ Հոդվածի 18-րդ կետի և 6-րդ Հոդվածի 6«բ» կետի դրույթները կիրառել այնպիսի եղանակով, որով թույլ կտրվի պատշաճորեն ընդլայնել մուտքի հնարավորությունները փոքր մատակարարողների համար, ինչպես նաև առևտրային առումով նշանակալի առևտրի հնարավորություններ զարգացնել մանածագործվածքների և հագուստեղենի առևտրի բնագավառ մուտք գործողների համար<sup>1</sup>:

3. Անդամները պատշաճ կերպով հաշվի են առնում այն Անդամների իրավիճակը, որոնք չեն ընդունել 1986թ-ից ի վեր Մանածագործվածքների միջազգային առևտրին վերաբերող համաձայնությունը (սույն Համաձայնագրում հիշատակվում է որպես «ԲՄՀ» (MFA)) երկարաձգող Արձանագրությունները և, հնարավորության սահմաններում, սույն Համաձայնագրի դրույթները կիրառելիս հատուկ մոտեցում են ցուցաբերում դրանց նկատմամբ:

4. Անդամները համաձայնում են, որ բամբակ արտադրող-արտահանող Անդամների առանձնահատուկ շահերը նրանց հետ խորհրդակցելուց հետո պետք է արտացոլվեն սույն Համաձայնագրի դրույթների իրականացման ժամանակ:

5. ՄԱԳ-Հ-1994-ի հետ մանածագործվածքների և հագուստեղենի ոլորտի միասնականացումը դյուրինացնելու համար Անդամները պետք է հաշվի առնեն արդյունաբերության ինքնուրույն շարունակական կարգավորումն ու մրցակցության աճն իրենց շուկաներում:

6. Եթե սույն Համաձայնագրով այլ բան չի նախատեսված, ապա դրա դրույթները ազդեցություն չեն ունենա Անդամների՝ ԱՀԿ համաձայնագրի և Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերի դրույթներով սահմանված իրավունքների և պարտավորությունների վրա:

7. Մանածագործական և հագուստեղենի արտադրանքները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Համաձայնագիրը, ներկայացված են Հավելվածում:

## Հոդված 2

1. ԲՄՀ-ի 4-րդ Հոդվածի համաձայն պահպանվող կամ 7-րդ կամ 8-րդ Հոդվածների համաձայն ծանուցված՝ երկկողմ համաձայնագրերի շրջանակներում եղած բոլոր քանակական սահմանափակումները, որոնք գործել են ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուն նախորդող օրը, դրա ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում այդ սահմանափակումները կիրառող Անդամների կողմից մանրամասնորեն՝ ներառյալ սահմանափակման մակարդակները, աճի թափը և ճկունության վերաբերյալ դրույթները, ծանուցվում են 8-րդ Հոդվածով նախատեսված Մանածագործվածքների հարցերով դիտանցող մարմնին (սույն Համաձայնագրում հիշատակվում է որպես «ՄԴՄ»): Անդամները համաձայնում են, որ ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած բոլոր այդպիսի սահմանափակումները, որոնք

<sup>1</sup> Հնարավորության սահմաններում, առավել թույլ զարգացած Անդամ երկրից արտահանումը նույնպես կարող է օգտվել սույն դրույթից:

պահպանվել են ՄԱԳՀ-1947-ի պայմանավորվող կողմերի միջև և գործել են դրա՝ ուժի մեջ մտնելուն նախորդող օրը, կարգավորվում են սույն Համաձայնագրի դրույթներով:

2. ՄԴՄ-ն այդ ծանուցումները տեղեկատվության նպատակով շրջաբերում է բոլոր Անդամներին: Ծանուցումների շրջաբերումից հետո՝ 60 օրվա ընթացքում ցանկացած Անդամ ազատ է ՄԴՄ-ի ուշադրությանը ներկայացնելու այդ ծանուցումների առնչությամբ ցանկացած նկատառում, որն ինքը նպատակահարմար է համարում: ՄԴՄ-ն անհրաժեշտության դեպքում կարող է հանձնարարականներ տալ գործին առնչվող Անդամներին:

3. Եթե 1-ին կետի համաձայն ծանուցման ենթակա սահմանափակումների 12-ամսյա ժամկետը չի համընկնում ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան անմիջապես նախորդող 12-ամսյա ժամկետի հետ, ապա խնդրո առարկա Անդամները պետք է փոխհամաձայնության գան այնպիսի միջոցառումների շուրջ, որոնք ուղղված են սահմանափակումների ժամկետը համաձայնագրային տարվան<sup>2</sup> համընկեցնելուն և սույն Հոդվածի դրույթները իրագործելու համար այդ սահմանափակումների պայմանական հիմնային մակարդակների սահմանմանը: Խնդրո առարկա Անդամները համաձայնում են պահանջ լինելու դեպքում անհապաղ խորհրդակցություններ սկսել այդպիսի փոխհամաձայնության գալու նպատակով: Ցանկացած այդպիսի միջոցառում այլոց թվում հաշվի է առնում վերջին տարիների առաքումների տարեժամանակային միտումները: Այդ խորհրդակցությունների արդյունքները ծանուցվում են ՄԴՄ-ին, որը գործին առնչվող Անդամներին տալիս է այնպիսի հանձնարարականներ, ինչպիսիք նպատակահարմար է համարում:

4. Համարվում է, որ 1-ին կետի համաձայն ծանուցված սահմանափակումները կազմում են ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու նախորդ օրը համապատասխան Անդամների կիրառած այդպիսի սահմանափակումների ամբողջությունը: Արտադրանքների կամ Անդամների նկատմամբ ոչ մի նոր սահմանափակում չի մտցվում, բացի սույն համաձայնագրի և ՄԱԳՀ-1994-ի համապատասխան դրույթներով<sup>3</sup> սահմանվածներից: Այն սահմանափակումները, որոնք ծանուցված չեն ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 60 օրվա ընթացքում, անհապաղ վերացվում են:

5. ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից առաջ ԲՄՀ-ի 3-րդ Հոդվածի համաձայն ձեռնարկված ցանկացած միակողմ միջոց կարող է գործել դրանում հատկորոշված ժամկետի ընթացքում, բայց ոչ ավել, քան 12 ամիս, եթե այն վերաքննվել է ԲՄՀ-ի համաձայն ստեղծված Մանածագործվածքների հարցերով հսկողության մարմնի կողմից (սույն համաձայնագրում հիշատակվում է որպես «ՄՀՄ»): Եթե ՄՀՄ-ն հնարավորություն չի ունեցել վերաքննելու որևէ այդպիսի միակողմ միջոց, ապա ՄՀՄ-ն վերաքննում է այն՝ ԲՄՀ-ի 3-րդ Հոդվածով սահմանված միջոցները ղեկավարող կանոնների և ընթացակարգերի համաձայն: ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից առաջ՝ ԲՄՀ-ի 4-րդ Հոդվածի համաձայնության շրջանակներում կիրառված ցանկացած միջոց, որը մի այնպիսի վեճի առարկա է, որը ՄՀՄ-ն հնարավորություն չի ունեցել վերաքննելու, նույնպես վերաքննվում է ՄԴՄ-ի կողմից՝ համաձայն ԲՄՀ-ի այդպիսի վերաքննության նկատմամբ կիրառելի կանոնների և ընթացակարգերի:

6. ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը յուրաքանչյուր Անդամ ՄԱԳՀ-1994-ին է միացնում արտադրանքներ, որոնք կազմում են Անդամի՝ Հավելվածում ընդգրկված արտադրանքների (ըստ ՆՀ հոդվածների և տեսակների) 1990թ. ներմուծումների ամբողջ ծավալի ոչ պակաս, քան 16 տոկոսը: Միացման ենթակա արտադրանքներն ընդգրկում են արտադրանքներ հետևյալ 4 խմբերից յուրաքանչյուրից. սանրագգած ժապավեն և մանվածք, գործվածք, մանածագործական պատրաստի արտադրանք և հագուստեղեն:

7. Խնդրո առարկա Անդամները ծանուցում են ներկայացնում 6-րդ կետի համաձայն ձեռնարկվող գործողությունների բոլոր մանրամասների մասին՝ համաձայն հետևյալի.

- ա) անկախ ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, այն Անդամները, որոնք 1-ին կետի տակ ընկնող սահմանափակումներ են պահպանում, պարտավորվում են այդ մանրամասները ՄԱԳՀ Քարտուղարությանը ծանուցել ոչ ուշ, քան 1994թ. ապրիլի 15-ի Նախարարների որոշմամբ սահմանված ժամկետը: ՄԱԳՀ Քարտուղարությունը այդ ծանուցումները տեղեկատվության նպատակով անհապաղ շրջաբերում է մյուս մասնակիցներին: 21-րդ կետի նպատակներով այդ ծանուցումները մատչելի կդարձվեն ՄԴՄ-ին, երբ այն կստեղծվի:
- բ) այն Անդամները, որոնք 6-րդ Հոդվածի 1-ին կետի համաձայն իրավունք են վերապահել կիրառել 6-րդ Հոդվածի դրույթները, այդ մանրամասները ծանուցում են ՄԴՄ-ին ոչ ուշ, քան ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օր հետո, կամ 1-ին Հոդվածի 3-րդ կետի տակ ընկնող Անդամների դեպքում՝ ոչ ուշ, քան ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու 12-րդ

<sup>2</sup> «Համաձայնագրային տարի» նշանակում է ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 12-ամսյա ժամկետ և դրան հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածները:

<sup>3</sup> ՄԱԳՀ-1994-ի համապատասխան դրույթները չեն ներառում XIX Հոդվածը՝ ՄԱԳՀ-1994-ին դեռևս չմիացված արտադրանքների մասով, բացառությամբ Հավելվածի 3-րդ կետով հատուկ նախատեսվածի:

ամսվա վերջը: ՄԴՄ-ն այդ ծանուցումները տեղեկատվության նպատակով շրջաբերում է մյուս Անդամներին և վերանայում է դրանք ըստ 21-րդ կետի:

8. Մնացած արտադրանքները, այսինքն՝ այն արտադրանքները, որոնք 6-րդ կետի համաձայն չեն միասնականացվել ՄԱԳ-Հ-1994-ի հետ, միացվում են ըստ ՆՀ հոդվածների ու տեսակների՝ հետևյալ 3 փուլերով.

- ա) ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ գտնվելու 37-րդ ամսվա 1-ին օրը՝ այն արտադրանքները որոնք կազմում են Անդամի՝ Հավելվածում ընդգրկված արտադրանքների 1990թ. ներմուծումների ամբողջ ծավալի ոչ պակաս, քան 17 տոկոսը: Անդամների կողմից միացման ենթակա արտադրանքներն ընդգրկում են հետևյալ չորս խմբերի արտադրանքներ. սանրագգած ժապավեն և մանվածք, գործվածք, մանածագործական պատրաստի արտադրանք և հագուստեղեն.
- բ) ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ գտնվելու 85-րդ ամսվա 1-ին օրը՝ այն արտադրանքները որոնք կազմում են Անդամի՝ Հավելվածում ընդգրկված արտադրանքների 1990թ. ներմուծումների ամբողջ ծավալի ոչ պակաս, քան 18 տոկոսը: Անդամների կողմից միացման ենթակա արտադրանքներն ընդգրկում են հետևյալ չորս խմբերի արտադրանքներ. սանրագգած ժապավեն և մանվածք, գործվածք, մանածագործական պատրաստի արտադրանք և հագուստեղեն.
- գ) ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ գտնվելու 121-րդ ամսվա 1-ին օրը՝ մանածագործվածքների և հագուստեղենի բաժինը վերջնականապես միացվում է ՄԱԳ-Հ-1994-ին՝ վերացնելով սույն Համաձայնագրով սահմանված բոլոր սահմանափակումները:

9. Սույն Համաձայնագրի նպատակներով համարվում է, որ այն Անդամները, որոնք 6-րդ Հոդվածի 1-ին կետի համաձայն ծանուցել են իրենց՝ 6-րդ Հոդվածի դրույթների օգտագործման իրավունքը չվերապահելու միտումը, իրենց մանածագործական ու հագուստեղենի արտադրանքները միացրել են ՄԱԳ-Հ-1994-ին: Հետևաբար, այդ Անդամներն ազատվում են 6-8-րդ և 11-րդ կետերի դրույթները կատարելուց:

10. Սույն Համաձայնագիրը ոչնչով չի խոչնդոտում այն Անդամին, որը 6-րդ կամ 8-րդ կետի համաձայն միասնականացման ծրագիր է ներկայացրել, արտադրանքները ՄԱԳ-Հ-1994-ի հետ միասնականացնելու ավելի վաղ, քան նախատեսված է այդ ծրագրով: Այնուամենայնիվ, արտադրանքների ցանկացած այդպիսի միասնականացում ուժի մեջ է մտնում համաձայնագրային տարվա սկզբում, իսկ դրանից առնվազն երեք ամիս առաջ մանրամասները ծանուցվում են ՄԴՄ-ին՝ բոլոր Անդամներին շրջաբերելու նպատակով:

11. 8-րդ կետի համաձայն միասնականացման համապատասխան ծրագրերը մանրամասնորեն ծանուցվում են ՄԴՄ-ին՝ դրանց ուժի մեջ մտնելուց առնվազն 12 ամիս առաջ, և ՄԴՄ-ն դրանք շրջաբերում է բոլոր Անդամներին:

12. 8-րդ կետում նշված մնացած արտադրանքների վրա դրված սահմանափակումների հիմնային մակարդակները՝ 1-ին կետով նախատեսված սահմանափակման մակարդակներն են:

13. Սույն Համաձայնագրի 1-ին փուլում (ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դրա՝ ուժի մեջ գտնվելու 36-րդ ամիսը ներառյալ) ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող 12-ամսյա ժամանակահատվածում ուժի մեջ գտնվող՝ ԲՄՀ երկկողմ համաձայնագրերով սահմանված յուրաքանչյուր սահմանափակման մակարդակը մեծացվում է տարեկան ոչ պակաս, քան համապատասխան սահմանափակումների համար սահմանված աճի չափը՝ ավելացած 16 տոկոսով:

14. Բացի այն դեպքերից, երբ Ապրանքների առևտրի խորհուրդը կամ Վեճերի կարգավորման մարմինն այլ բան է որոշում համաձայն 8-րդ Հոդվածի 12-րդ կետի, յուրաքանչյուր մնացած սահմանափակման մակարդակ սույն Համաձայնագրի հետագա փուլերում տարեկան աճում է ոչ պակաս, քան.

- ա) 2-րդ փուլի համար (ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ գտնվելու 37-ից մինչև 84-րդ ամիսը ներառյալ)՝ 1-ին փուլում եղած համապատասխան սահմանափակումների աճի չափը՝ ավելացված 25 տոկոսով.
- բ) 3-րդ փուլի համար (ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ գտնվելու 85-ից մինչև 120-րդ ամիսը ներառյալ)՝ 2-րդ փուլում եղած համապատասխան սահմանափակումների աճի չափը՝ ավելացված 27 տոկոսով:

15. Սույն Համաձայնագիրը ոչնչով չի արգելում, որ Անդամը վերացնի սույն Հոդվածի համաձայն պահպանվող ցանկացած սահմանափակում, որը գործել է անցումային շրջանի որևէ համաձայնագրային տարվա սկզբում, եթե խնդրո առարկա արտահանող Անդամն ու ՄԴՄ-ն ծանուցվել են ուժի մեջ մտնող վերացումից առնվազն երեք ամիս առաջ: Նախնական ծանուցման ժամկետը, սահմանափակման ենթակա Անդամի համաձայնությամբ, կարող է կրճատվել մինչև 30 օր: ՄԴՄ-ն այդպիսի ծանուցումները շրջաբերում է բոլոր Անդամներին: Սույն կետով նախատեսված սահմանափակումների վերացման հարցը քննարկելիս խնդրո առարկա Անդամները հաշվի են առնում այլ Անդամներից եկող համանման արտահանումների

նկատմամբ մոտեցումը:

16. Դկունության, այսինքն՝ տատանման, առաջտեղափոխման ու հետտեղափոխման վերաբերյալ դրույթները, որոնք կիրառելի են սույն Հոդվածի համաձայն պահպանված բոլոր սահմանափակումների նկատմամբ, նույնական են նրանց, որոնք նախատեսված էին ԲՄՀ-ի երկկողմ համաձայնագրերով՝ ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուն նախորդող 12-ամսյա ժամանակահատվածի համար: Ոչ մի քանակական սահմանափակում չի դրվում կամ պահպանվում տատանման, առաջտեղափոխման ու հետտեղափոխման համակցված կիրառման վրա:

17. Վարչական միջոցառումները, որոնք անհրաժեշտ են համարվում սույն Հոդվածի որևէ դրույթի իրականացման առնչությամբ, խնդրո առարկա Անդամների միջև համաձայնեցման առարկա են: Ցանկացած այդպիսի համաձայնություն ծանուցվում է ՄԴՄ-ին:

18. Այն Անդամների առնչությամբ, որոնց արտահանումները ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու նախորդ օրը ենթակա են սահմանափակման, և որոնց սահմանափակումները կազմում են ներմուծող Անդամի կողմից՝ 1991թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կիրառված և սույն Համաձայնագրի համաձայն ծանուցված սահմանափակումների ընդհանուր ծավալի 1.2 տոկոսը կամ ավելի քիչ, ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահին և սույն Համաձայնագրի գործողության ընթացքում դրանց արտահանման համար մուտքի նշանակալի բարելավում է ապահովվում՝ 13-րդ և 14-րդ կետերում նշված աճի գործակիցների մեկական փուլով առաջխաղացման եղանակով կամ էլ առնվազն հիմնային մակարդակների, աճի և ճկունության վերաբերյալ դրույթների այլ զուգորդության հետ կապված՝ փոխհամաձայնեցված համարժեք փոփոխությունների միջոցով: Այդպիսի բարելավումները ծանուցվում են ՄԴՄ-ին:

19. Ցանկացած դեպքում սույն Համաձայնագրի գործողության ընթացքում եթե որևէ Անդամ ՄԱԳՀ-1994-ի XIX Հոդվածի համաձայն պաշտպանական միջոց է նախաձեռնում առանձին արտադրանքի նկատմամբ՝ այդ արտադրանքի՝ սույն Հոդվածի դրույթների համաձայն ՄԱԳՀ-1994-ին միացմանն անմիջապես հաջորդող մեկ տարվա ժամանակահատվածի ընթացքում, ապա կկիրառվեն XIX Հոդվածի դրույթները՝ Պաշտպանական միջոցների մասին համաձայնագրի մեկնաբանությամբ, բացառելով 20-րդ կետում շարադրվածը:

20. Եթե այդպիսի միջոց է կիրառվում՝ օգտագործելով ոչ մաքսային միջոցներ, ապա խնդրո առարկա ներմուծող Անդամը՝ ցանկացած արտահանող Անդամի պահանջով, որի այդպիսի արտադրանքների արտահանումները պաշտպանական միջոցի նախաձեռնմանն անմիջապես նախորդող մեկ տարվա ժամանակահատվածում ընկած որևէ պահի ենթակա էին սահմանափակման սույն Համաձայնագրի համաձայն, միջոցը կիրառում է ըստ ՄԱԳՀ-1994-ի XIII Հոդվածի 2«դ» կետի: Այդպիսի միջոցն իրականացնում է խնդրո առարկա արտահանող Անդամը: Կիրառելի մակարդակով համապատասխան արտահանումները չեն նվազեցվում վերջին հատկանշական ժամանակահատվածի մակարդակից, որը սովորաբար կազմում է խնդրո առարկա Անդամի՝ վերջին երեք հատկանշական տարիների (որոնց համար առկա են վիճակագրական տվյալները) արտահանման միջինը: Բացի այդ, եթե պաշտպանական միջոցը կիրառվում է մեկ տարուց ավելի, ապա կիրառելի մակարդակը կիրառման ժամանակահատվածում աստիճանաբար ազատականացվում է կանոնավոր պարբերությամբ: Այդ դեպքերում խնդրո առարկա արտահանող Անդամը չի կիրարկում իր՝ ՄԱԳՀ-1994-ի XIX Հոդվածի 3«ա» կետով սահմանված՝ էականորեն համարժեք զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցման իրավունքը:

21. ՄԴՄ-ն վերանայում է սույն Հոդվածի իրականացումը: Ցանկացած Անդամի պահանջով այն վերանայում է ցանկացած առանձին հարց՝ վկայակոչելով սույն Հոդվածի դրույթների իրականացումը: Այդ Անդամներին մասնակցության հրավիրելուց հետո՝ 30 օրվա ընթացքում այն խնդրո առարկա Անդամին կամ Անդամներին տալիս է պատշաճ հանձնարարականներ կամ եզրահանգումներ:

### Հոդված 3

1. ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 60 օրվա ընթացքում, մանածագործական ու հագուստեղենի արտադրանքների նկատմամբ սահմանափակումներ<sup>4</sup> (բացի ԲՄՀ-ի համաձայն պահպանվող և 2-րդ Հոդվածի դրույթներով նախատեսված սահմանափակումներից) պահպանող Անդամները, անկախ այն բանից, դրանք համատեղելի են ՄԱԳՀ-1994-ի հետ, թե ոչ. ա) ՄԴՄ-ին մանրամասնորեն ծանուցում են դրանց մասին, կամ՝ բ) ՄԴՄ-ին տրամադրում են իրենց վերաբերող՝ ցանկացած այլ ԱՀԿ մարմին ներկայացրած ծանուցումները: Ծանուցումներում ըստ հնարավորության

<sup>4</sup> Սահմանափակումները մատնանշում են բոլոր միակողմ քանակական սահմանափակումները, երկկողմ համաձայնությունները և համանման հետևանք ունեցող այլ միջոցներ:

պետք է տեղեկություն տրվի սահմանափակումների՝ ՄԱԳ-Հ-1994-ով պայմանավորված ցանկացած արդարացման առնչությամբ, ներառյալ՝ ՄԱԳ-Հ-1994-ի այն դրույթները, որոնց վրա դրանք հիմնված են:

2. Այն Անդամները, որոնք պահպանում են 1-ին կետի տակ ընկնող սահմանափակումներ, բացառությամբ՝ ՄԱԳ-Հ-1994-ի դրույթներով արդարացվող սահմանափակումների,

ա) կամ՝ ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում դրանք համապատասխանեցնում են ՄԱԳ-Հ-1994-ին, և տեղեկատվության նպատակով այդ գործողության մասին ծանուցում են ՄԴՄ-ին, կամ էլ՝

բ) աստիճանաբար վերացնում են դրանք՝ համաձայն այն ծրագրի, որը սահմանափակումներ պահպանող Անդամը ՄԴՄ-ին պետք է ներկայացնի ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան 6 ամիս անց: Այդ ծրագրով նախատեսվում է բոլոր սահմանափակումները վերացնել սույն Համաձայնագրի տևողությունը չգերազանցող ժամանակահատվածում: ՄԴՄ-ն այդ ծրագրի կապակցությամբ կարող է հանձնարարականներ տալ խնդրո առարկա Անդամին:

3. Սույն Համաձայնագրի տևողության ընթացքում Անդամները տեղեկատվության նպատակով ՄԴՄ-ին տրամադրում են ցանկացած այլ ԱՀԿ Մարմին ներկայացված այն ծանուցումները, որոնք առնչվում են ՄԱԳ-Հ-1994-ի դրույթների համաձայն ձեռնարկված՝ մանածագործական ու հագուստեղենի արտադրանքներին վերաբերող ցանկացած նոր սահմանափակման կամ էլ գոյություն ունեցող սահմանափակումներում կատարած փոփոխությունների՝ դրանց ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում:

4. Ցանկացած Անդամ ազատ է տեղեկատվության նպատակով հակադիր ծանուցումներ ներկայացնելու ՄԴՄ-ին՝ ՄԱԳ-Հ-1994-ով պայմանավորված արդարացման կապակցությամբ, կամ ցանկացած սահմանափակման կապակցությամբ, որը կարող էր սույն Հոդվածի դրույթների համաձայն ծանուցված չլինել: Ցանկացած Անդամ կարող է ԱՀԿ համապատասխան մարմնում այդպիսի ծանուցումներին առնչվող գործողություններ կատարել համաձայն ՄԱԳ-Հ-1994-ի համապատասխան դրույթների կամ ընթացակարգերի:

5. ՄԴՄ-ն տեղեկատվության նպատակով սույն Հոդվածի առնչությամբ կատարված ծանուցումները շրջաբերում է բոլոր Անդամներին:

#### Հոդված 4

1. 2-րդ Հոդվածում հիշատակված սահմանափակումներն ու 6-րդ Հոդվածի համաձայն կիրառվողները իրականացվում են արտահանող Անդամների կողմից: Ներմուծող Անդամները պարտավոր չեն առաքումներ ընդունել ի հավելումն 2-րդ Հոդվածի համաձայն ծանուցված կամ 6-րդ Հոդվածի համաձայն կիրառվող սահմանափակումների:

2. Անդամները համաձայնում են, որ սույն Համաձայնագրի համաձայն ծանուցված կամ կիրառված սահմանափակումների իրականացման կամ վարչարարության մասով այնպիսի փոփոխությունների ներմուծումը, ինչպիսիք են գործելակերպերին, կանոններին, ընթացակարգերին և մանածագործական ու հագուստեղենի արտադրանքների դասակարգմանը վերաբերող փոփոխությունները, ներառյալ՝ Ներդաշնակեցված համակարգին վերաբերող փոփոխությունները, չպետք է խախտեն սույն Համաձայնագրով սահմանված իրավունքների և պարտավորությունների հաշվեկշիռը խնդրո առարկա Անդամների միջև, բացասաբար ազդեն Անդամին հասնող շուկայի մատչելիության վրա, խոչընդոտեն այդ մատչելիության լիարժեք օգտագործումը, կամ վնասեն սույն Համաձայնագրով վարվող առևտուրը:

3. Եթե 2-րդ Հոդվածի դրույթներով սահմանված միասնականացման նպատակով ծանուցում է արվում այն արտադրանքի մասին, որը սահմանափակման միայն մաս է կազմում, ապա Անդամները համաձայնում են, որ այդ սահմանափակման մակարդակի ցանկացած փոփոխություն չի խախտում սույն Համաձայնագրով սահմանված իրավունքների և պարտավորությունների հաշվեկշիռը խնդրո առարկա Անդամների միջև:

4. Եթե 2-րդ և 3-րդ կետերում շարադրված փոփոխություններն անհրաժեշտ են, ապա Անդամներն այնուամենայնիվ համաձայնում են, որ այդպիսի փոփոխություններ նախաձեռնող Անդամը տեղեկացնում է այդ մասին և հնարավորության դեպքում խորհրդակցություններ է սկսում տուժող Անդամի կամ Անդամների հետ նախքան այդ փոփոխությունների իրականացումը՝ նպատակ ունենալով փոխադարձաբար ընդունելի լուծում գտնել պատշաճ և անաչառ կարգավորման վերաբերյալ: Անդամներն այնուհետև համաձայնում են, որ եթե նախքան իրականացումն անհնար է խորհրդակցություն անցկացնել, ապա այդպիսի փոփոխություններ նախաձեռնող Անդամը, տուժող Անդամի պահանջով, հնարավորության դեպքում 60 օրվա ընթացքում կխորհրդակցի խնդրո առարկա Անդամների հետ՝ նպատակ ունենալով փոխադարձաբար

գոհացուցիչ լուծում գտնել պատշաճ և անաչառ կարգավորումների վերաբերյալ: Փոխադարձաբար գոհացուցիչ լուծման չհասնելու դեպքում խնդրո առարկա ցանկացած Անդամ կարող է 8-րդ Հոդվածով նախատեսված հանձնարարականների համար դիմել ՄԴՄ-ին: Եթե ՄՀՄ-ն հնարավորություն չի ունեցել վերաքննելու ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց առաջ մտցված այդպիսի փոփոխությունների վերաբերյալ վեճը, ապա ՄԴՄ-ն այն վերաքննում է ԲՄՀ-ի՝ այդպիսի վերաքննության համար կիրառելի կանոնների և ընթացակարգերի համաձայն:

## Հոդված 5

1. Անդամները համաձայնում են, որ փոխառաքման, երթուղու փոփոխման, ծագման երկրի կամ վայրի վերաբերյալ կեղծ հայտարարագրի և պաշտոնական փաստաթղթերի կեղծման եղանակով կատարած շրջանցումները խափանում են սույն Համաձայնագրի իրականացումը՝ ՄԱԳ-Հ-1994-ին մանածագործվածքների և հագուստեղենի բաժնի միացման առումով: Համապատասխանաբար, Անդամները պետք է սահմանեն անհրաժեշտ իրավական դրույթներ և(կամ) վարչական ընթացակարգեր՝ այդպիսի շրջանցումների հետ գործ ունենալու և դրանց դեմ գործողություններ ձեռնարկելու համար: Անդամներն այնուհետև, համաձայնում են, որ իրենց ներքին օրենքներին և ընթացակարգերին համապատասխան՝ լիարժեքորեն կհամագործակցեն շրջանցումների պատճառով ծագած խնդիրները լուծելու համար:

2. Եթե որևէ Անդամ համոզված է, որ սույն Համաձայնագիրը շրջանցվում է փոխառաքման, երթուղու փոփոխման, ծագման երկրի կամ վայրի վերաբերյալ կեղծ հայտարարագրի կամ պաշտոնական փաստաթղթերի կեղծման միջոցով, և որ այդպիսի շրջանցումների հետ գործ ունենալու և(կամ) դրանց դեմ գործողություններ ձեռնարկելու համար միջոցներ չեն կիրառվում կամ կիրառվող միջոցներն անբավարար են, ապա այդ Անդամը պետք է խորհրդակցի գործին առնչվող Անդամի կամ Անդամների հետ՝ նպատակ ունենալով փոխադարձաբար գոհացուցիչ լուծում գտնել: Այդ խորհրդակցությունները պետք է անցկացվեն շտապ կարգով և հնարավորության դեպքում՝ 30 օրվա ընթացքում: Փոխադարձաբար գոհացուցիչ լուծման չհասնելու դեպքում գործում ընդգրկված ցանկացած Անդամ կարող է հանձնարարականների համար հարցը ներկայացնել ՄԴՄ-ին:

3. Անդամները համաձայնում են իրենց ներքին օրենքներին և ընթացակարգերին համապատասխան անհրաժեշտ գործողություններ ձեռնարկել՝ իրենց տարածքներում շրջանցման գործելակերպերի կանխման, ուսումնասիրման և անհրաժեշտության դեպքում դրանց դեմ իրավական և(կամ) վարչական միջոցներ ձեռնարկելու համար: Անդամները համաձայնում են իրենց ներքին օրենքներին և ընթացակարգերին համապատասխան՝ լիարժեքորեն համագործակցել սույն Համաձայնագրի շրջանցման կամ ենթադրյալ շրջանցման դեպքերում՝ ներմուծման, արտահանման և, որտեղ կիրառելի է, փոխառաքման վայրերում համապատասխան փաստերի հաստատման նպատակով: Համաձայնեցված է, որ ներքին օրենքներին և ընթացակարգերին համապատասխանող նման համագործակցությունը կընդգրկի շրջանցման գործելակերպերի ուսումնասիրումը, որոնցով մեծացվում են սահմանափակված արտահանումները դեպի այդ սահմանափակումներ պահպանող Անդամ երկիր, հնարավորության սահմաններում փաստաթղթերի, թղթակցության, զեկուցագրերի և համանման այլ տեղեկատվության փոխանակումը և ըստ պահանջի կամ դեպքից կախված՝ գործարաններ կատարվող այցերի և դրանց հետ կապերի դյուրինացումը: Անդամները պետք է ձգտեն պարզել շրջանցման կամ հայտարարվող շրջանցման ցանկացած դեպքի հանգամանքները, ներառյալ՝ գործում ընդգրկված արտահանողների և ներմուծողների համապատասխան դերերը:

4. Անդամները համաձայնում են, որ եթե ուսումնասիրության արդյունքում ի հայտ են գալիս բավարար ապացույցներ առ այն, որ շրջանցում է տեղի ունեցել (օրինակ՝ երբ առկա են ապացույցներ իրական ծագման երկրի կամ վայրի և այդպիսի շրջանցման հանգամանքների վերաբերյալ), ապա համապատասխան գործողություն պետք է ձեռնարկվի խնդրի լուծման համար անհրաժեշտ չափով: Այդ գործողությունը կարող է ընդգրկել ապրանքների մուտքի մերժում կամ, եթե ապրանքներն արդեն մուտք են գործել, ապա իրական ծագման երկիրը կամ վայրն արտացոլելու համար սահմանափակման մակարդակների մասով վճարների ճշգրտում՝ պատշաճորեն հաշվի առնելով փաստացի հանգամանքները և իրական ծագման երկրի կամ վայրի ներգրավվածությունը: Դրա հետ մեկտեղ, եթե առկա են ապացույցներ այն Անդամների տարածքների ներգրավվածության վերաբերյալ, որոնց միջով ապրանքները փոխառաքվել են, ապա նման գործողությունը կարող է նաև ներառել այդ Անդամների նկատմամբ սահմանափակումների կիրառումը: Յանկացած այդպիսի գործողություն՝ իր ժամկետով և ընդգրկմամբ հանդերձ, կարող է ձեռնարկվել խնդրո առարկա Անդամների միջև փոխադարձաբար գոհացուցիչ լուծման հասնելու նպատակով անցկացված խորհրդակցություններից հետո և լիարժեք հիմնավորմամբ ծանուցվում է ՄԴՄ-

ին: Խորհրդակցության ժամանակ գործին առնչվող Անդամները կարող են համաձայնության գալ հատուցման այլ միջոցների վերաբերյալ: Ցանկացած այդպիսի համաձայնություն նույնպես ծանուցվում է ՄԴՄ-ին, և ՄԴՄ-ն կարող է այնպիսի հանձնարարականներ տալ խնդրո առարկա Անդամներին, ինչպիսիք որ նպատակահարմար է գտնում: Փոխադարձաբար գոհացուցիչ լուծման չհասնելու դեպքում ցանկացած խնդրո առարկա Անդամ կարող է հարցը ներկայացնել ՄԴՄ շտապ վերաքննման և հանձնարարականների համար:

5. Անդամները նշում են, որ շրջանցման որոշ դեպքեր կարող են երկրների կամ վայրերի միջով տարանցիկ առաքում ընդգրկել՝ առանց տարանցման վայրերում այդ առաքումներում պարունակվող ապրանքների որևէ փոփոխման կամ ձևափոխման: Նրանք նշում են, որ այդպիսի տարանցիկ վայրերում այդ առաքումների նկատմամբ վերահսկողության իրականացումը կարող է ընդհանուր առմամբ հնարավոր չլինել:

6. Անդամները համաձայնում են, որ մանրաթելի բաղադրության, քանակի, ապրանքի նկարագրության ու դասակարգման վերաբերյալ կեղծ հայտարարագրումը նույնպես խափանում է սույն Համաձայնագրի նպատակները: Անդամները համաձայնում են, որ եթե ապացույցներ կան, որ շրջանցման նպատակով որևէ այդպիսի կեղծ հայտարարագիր է կազմվել, ապա իրենց ներքին օրենքներին և ընթացակարգերին համապատասխան՝ անհրաժեշտ միջոցներ պետք է կիրառվեն գործում ներգրավված ներմուծողների և արտահանողների նկատմամբ: Եթե որևէ Անդամ համոզված է, որ սույն Համաձայնագիրը շրջանցվում է այդպիսի կեղծ հայտարարագրման միջոցով, և որ այդպիսի շրջանցումների հետ գործ ունենալու և(կամ) դրանց դեմ գործողություններ ձեռնարկելու համար միջոցներ չեն կիրառվում կամ կիրառվող միջոցներն անբավարար են, ապա այդ Անդամը պետք է շտապ խորհրդակցի գործի մեջ ընդգրկված Անդամի հետ՝ նպատակ ունենալով փոխադարձաբար գոհացուցիչ լուծում գտնելու: Փոխադարձաբար գոհացուցիչ լուծման չհասնելու դեպքում գործում ընդգրկված ցանկացած Անդամ կարող է հանձնարարականների համար հարցը ներկայացնել ՄԴՄ-ին: Սույն դրույթով չի նախատեսվում Անդամներին արգելել տեխնիկական շտկումներ կատարել, երբ հայտարարագրերում թույլ են տրված անուշադրության սխալներ:

## Հոդված 6

1. Անդամներն ընդունում են, որ անցումային շրջանում կարող է յուրահատուկ անցումային պաշտպանական գործակառույց (սույն Համաձայնագրում հիշատակվում է որպես «անցումային պաշտպանություն») կիրառելու անհրաժեշտություն լինել: Անցումային պաշտպանություն կարող է կիրառել ցանկացած Անդամ՝ Հավելվածում ընդգրկված արտադրանքների նկատմամբ, բացի 2-րդ Հոդվածի դրույթների համաձայն ՄԱԳՀ-1994-ին միացվածներից: Այն Անդամները, որոնք 2-րդ Հոդվածով սահմանված սահմանափակումներ չեն պահպանում, ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 60 օրվա ընթացքում ՄԴՄ-ին ծանուցում են՝ արդյոք իրենք ցանկանում են պահպանել սույն Հոդվածի դրույթների օգտագործման իրավունքը, թե ոչ: Այն Անդամները, որոնք չեն ընդունել ԲՄՀ-ի՝ 1986թ-ից սկսած երկարաձգման վերաբերյալ Արձանագրությունները, այդպիսի ծանուցումներ են կատարում ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող 6 ամսվա ընթացքում: Անցումային պաշտպանությունը պետք է կիրառվի հնարավորին չափ զիջողամտաբար՝ սույն Հոդվածի դրույթներին ու սույն Համաձայնագրով սահմանված միասնականացման գործընթացի արդյունավետ իրականացմանը համապատասխան:

2. Սույն Հոդվածի համաձայն պաշտպանական գործողություն կարող է ձեռնարկվել, երբ Անդամի<sup>5</sup> կայացրած եզրակացության հիման վրա ապացուցվում է, որ առանձին արտադրանքն իր տարածքն է ներմուծվում այնպիսի աճող քանակներով, որ լուրջ վնաս է հասցնում կամ լուրջ վնասի իրական վտանգ է ստեղծում ներքին արդյունաբերական ճյուղերին, որոնք արտադրում են նման և(կամ) ուղղակիորեն մրցակից արտադրանքներ: Լուրջ վնասի և դրա իրական վտանգի պատճառը ակնբախորեն պետք է այդ արտադրանքի ընդհանուր ներմուծման այդպիսի աճող քանակները լինեն, և ոչ թե այնպիսի այլ գործոններ, ինչպիսիք են տեխնոլոգիական փոփոխությունները կամ էլ սպառողական նախապատվության փոփոխությունները:

3. Լուրջ վնասի կամ դրա իրական վտանգի վերաբերյալ եզրակացություն կայացնելիս, ինչպես նշված է

<sup>5</sup> Մաքսային միությունը կարող է պաշտպանական միջոց կիրառել կամ՝ որպես առանձին միավոր, կամ՝ Անդամ երկրի անունից: Եթե մաքսային միությունը պաշտպանական միջոցը կիրառում է որպես առանձին միավոր, ապա սույն Համաձայնագրով սահմանված՝ լուրջ վնասի կամ դրա իրական վտանգի որոշման համար բոլոր պահանջները հիմնվում են ամբողջությամբ վերցրած մաքսային միությունում առկա պայմանների վրա: Եթե մաքսային միությունը պաշտպանական միջոցը կիրառում է Անդամ երկրի անունից, ապա լուրջ վնասի կամ դրա իրական վտանգի որոշման համար բոլոր պահանջները հիմնվում են այդ Անդամ երկրում գոյություն ունեցող պայմանների վրա, և միջոցը սահմանափակվում է այդ Անդամ երկրով:

2-րդ կետում, Անդամը քննության է առնում այդ ներմուծումների ազդեցությունը արդյունաբերական առանձին ճյուղի վիճակի վրա, որն արտացոլվում է առնչություն ունեցող տնտեսական այնպիսի փոփոխականների փոփոխություններով, ինչպիսիք են թողարկված արտադրանքը, արտադրողականությունը, արտադրական հզորությունների շահագործումը, արտադրանքի պաշարները, շուկայում ունեցած բաժինը, արտահանումը, աշխատավարձերը, զբաղվածությունը, ներքին գները, շահույթներն ու ներդրումները, որոնցից և ոչ մեկը՝ ոչ առանձին ու ոչ էլ այլ գործոնների հետ համակցված, չեն կարող անհրաժեշտաբար վճռորոշ ուղեցույց լինել:

4. Սույն Հոդվածի դրույթների համաձայն վկայակոչված ցանկացած միջոց կիրառվում է Անդամ-առ-Անդամ հիմունքով: Անդամը կամ Անդամները, որոնց վերագրվում է 2-րդ և 3-րդ կետերում նշված լուրջ վնասը կամ դրա իրական վտանգը, որոշվում են առանձին վերցրած այդպիսի Անդամից կամ Անդամներից ներմուծման կտրուկ և էական աճի հիման վրա, լինի դա իրական թե վերահաս<sup>6</sup>, և ներմուծումների մակարդակի հիման վրա՝ այն համեմատելով այլ աղբյուրներից ներմուծման հետ, շուկայում ունեցած բաժնի հիման վրա և առևտրային գործարքների համեմատելի փուլում եղած ներմուծման ու ներքին գների հիման վրա. այս գործոններից և ոչ մեկը՝ ոչ առանձին ու ոչ էլ այլ գործոնների հետ համակցված, չեն կարող անհրաժեշտաբար վճռորոշ ուղեցույց լինել: Այդպիսի պաշտպանական միջոց չի կիրառվում որևէ Անդամի արտահանումների նկատմամբ, որի առանձին արտադրանքի արտահանումն արդեն ենթակա է սահմանափակման սույն Համաձայնագրի համաձայն:

5. Պաշտպանական գործողության դիմելու նպատակով, լուրջ վնասի կամ դրա իրական վտանգի մասին եզրակացության գործողության ժամկետը չի գերազանցում 90 օրը՝ սկսած 7-րդ կետով նախատեսված սկզբնական ծանուցման օրվանից:

6. Անցումանյին պաշտպանություն կիրառելիս առանձնապես հաշվի են առնվում, արտահանող Անդամների շահերը, ինչպես դա շարադրված է ստորև.

- ա) առավել թույլ զարգացած Անդամ երկրների նկատմամբ ցուցաբերվում է զգալիորեն ավելի բարենպաստ մոտեցում, քան սույն կետում նշված Անդամների մյուս խմբերի նկատմամբ նախատեսված մոտեցումը. գերադասելի է դա անել իր բոլոր տարրերով հանդերձ, եթե ոչ՝ զոնե ընդհանուր առումով:
- բ) այն Անդամների նկատմամբ, որոնց մասնաձագործվածքների և հագուստեղենի արտահանման ընդհանուր ծավալը փոքր է՝ համեմատած այլ Անդամների արտահանման ընդհանուր ծավալի հետ, և որոնց ընկնում է ներմուծող Անդամ երկիր այդ արտադրանքի ընդհանուր ներմուծման միայն փոքր տոկոսաչափը, տարբերակված և ավելի բարենպաստ մոտեցում է ցուցաբերվում՝ 8-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված տնտեսական պայմանների սահմանման հարցում: Այդ մատակարարների հարցում 1-ին Հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն պատշաճ կերպով հաշվի են առնվում դրանց առևտրի զարգացման հետագա հնարավորությունները և դրանցից եկող առևտրային քանակներով ներմուծումներ թույլատրելու անհրաժեշտությունը.
- գ) բրդեղեն արտադրող զարգացող Անդամ երկրներից եկող բրդյա արտադրանքների առնչությամբ, քվոտայի չափը, աճի թափն ու ճկունությունը հաշվի առնելիս հատուկ ուշադրություն է դարձվում այն Անդամների արտահանման կարիքներին, որոնց տնտեսությունն ու մասնաձագործվածքների և հագուստեղենի առևտուրը կախված են բրդեղենի ոլորտից, և որոնց մասնաձագործվածքների և հագուստեղենի ընդհանուր արտահանումը բաղկացած է գրեթե բացառապես բրդյա արտադրանքներից, ու որոնց մասնաձագործվածքների և հագուստեղենի առևտրի ծավալը ներմուծող Անդամների շուկաներում համեմատաբար փոքր է.
- դ) ավելի բարենպաստ մոտեցում է ցուցաբերվում որևէ Անդամի կողմից մասնաձագործական ու հագուստեղենի արտադրանքների վերաներմուծման նկատմամբ, որոնք այդ Անդամ երկիրը՝ վերամշակման ու հետագա վերաներմուծման համար այլ Անդամ երկիր է արտահանել ներմուծող Անդամի օրենքներով ու գործելակերպերով սահմանված կերպով և հաշվի առնելով բավարար վերահսկողության ու հավաստագրման գործընթացները, եթե այդ արտադրանքները ներմուծվում են մի Անդամ երկրից, որի համար առևտրի այդ ձևը ներկայացնում է մասնաձագործվածքների և հագուստեղենի իր ընդհանուր արտահանման նշանակալի մասը:

7. Անդամը, որը հանդես է գալիս պաշտպանական գործողություն ձեռնարկելու նախաձեռնությամբ, ձգտում է խորհրդակցությունների մեջ մտնել այն Անդամի կամ Անդամների հետ, որոնք կարող են տուժել այդ գործողության հետևանքով: Խորհրդակցությունների անցկացման պահանջն ուղեկցվում է հատկորոշված ու հարցին առնչվող փաստացի, հնարավորին չափ յուրաժամանակ տեղեկություններով՝

<sup>6</sup> Այդպիսի վերահաս աճը չափելի պետք է լինի, և դրա առկայությունը չպետք է որոշվի անհիմն պնդման, ենթադրության կամ զուտ հավանականության հիման վրա, որը բխում է, օրինակ՝ արտահանող Անդամ երկրներում արտադրական հզորությունների



մասնավորապես հետևյալի վերաբերյալ. ա) 3-րդ կետում հիշատակված այն գործոնների, որոնց հիման վրա գործողության դիմող Անդամը եզրակացության է հանգել լուրջ վնասի կամ դրա իրական վտանգի առկայության մասին, և՛ բ) 4-րդ կետում հիշատակված այն գործոնների, որոնց վրա հիմնվելով՝ նա հանդես է եկել խնդրո առարկա Անդամի կամ Անդամների նկատմամբ պաշտպանական գործողության դիմելու նախաձեռնությամբ: Սույն կետի համաձայն ներկայացված պահանջների հետ կապված տեղեկությունները պետք է հնարավորության սահմաններում վերաբերեն արտադրության հատկորոշելի հատվածներին և 8-րդ կետով սահմանված հղման ժամանակահատվածին: Գործողության դիմող Անդամը նաև նշում է այն որոշակի մակարդակը, որով առաջարկվում է սահմանափակել խնդրո առարկա Անդամից կամ Անդամներից եկող տվյալ արտադրանքի ներմուծումները. այդ մակարդակը չպետք է ավելի ցածր լինի 8-րդ կետում հիշատակվող մակարդակից: Խորհրդակցություններ ցանկացող Անդամը ՄԳՄ-ի նախագահին միաժամանակ տեղեկացնում է խորհրդակցությունների անցկացման պահանջի մասին, ներառյալ՝ 3-րդ և 4-րդ կետերում նկարագրված գործին առնչվող բոլոր փաստացի տվյալները՝ սահմանափակման առաջարկվող մակարդակի հետ միասին: Նախագահը ՄԳՄ-ի անդամներին տեղեկացնում է խորհրդակցությունների անցկացման պահանջի մասին՝ մատնանշելով պահանջ ներկայացնող Անդամին, խնդրո առարկա արտադրանքն ու պահանջը ստացած Անդամին: Խնդրո առարկա Անդամը կամ Անդամները շտապ կարգով պատասխանում են այդ պահանջին, իսկ խորհրդակցություններն անց են կացվում առանց հետաձգման և սովորաբար ավարտվում են պահանջը ստանալու օրվանից հաշված՝ 60 օրվա ընթացքում:

8. Եթե խորհրդակցությունների ընթացքում փոխըմբռնում կա առ այն, որ իրավիճակը թելադրում է սահմանափակել խնդրո առարկա Անդամի կամ Անդամների առանձին արտադրանքի արտահանումները, ապա այդպիսի սահմանափակման մակարդակն ամրագրվում է մի մակարդակի վրա, որն ավելի փոքր չէ. քան խնդրո առարկա Անդամ երկրից եկած արտահանումների կամ ներմուծումների փաստացի մակարդակը 12-ամսյա այն ժամանակահատվածում, որն ավարտվում է խորհրդակցությունների պահանջը ներկայացնելու ամսվանից երկու ամիս առաջ:

9. Համաձայնեցված սահմանափակման միջոցի մանրամասները հաղորդվում են ՄԳՄ-ին՝ համաձայնության գալու օրվանից հետո՝ 60 օրվա ընթացքում: ՄԳՄ-ն որոշում է՝ արդյոք համաձայնությունը հիմնավորված է սույն Հոդվածի դրույթներին համապատասխան, թե ոչ: Որոշելու համար ՄԳՄ-ն իր ձեռքի տակ պետք է ունենա ՄԳՄ նախագահին տրամադրված՝ 7-րդ կետում նշված փաստացի տվյալները, ինչպես նաև խնդրո առարկա Անդամների տրամադրած գործին առնչվող ցանկացած այլ տեղեկություններ: ՄԳՄ-ն խնդրո առարկա Անդամներին կարող է տալ այնպիսի հանձնարարականներ, ինչպիսիք անհրաժեշտ է համարում:

10. Այնուամենայնիվ, եթե խորհրդակցությունների անցկացման պահանջը ստանալու օրվանից սկսած 60 օրվա ժամկետի ավարտից հետո Անդամները համաձայնության չեն գալիս, ապա պաշտպանական գործողության նախաձեռնությամբ հանդես եկող Անդամը կարող է խորհրդակցությունների համար նախատեսված 60 օրվա ժամանակահատվածին հաջորդող 30 օրվա ընթացքում սույն Հոդվածի դրույթների համաձայն սահմանափակում կիրառել՝ ըստ ներմուծման օրվա կամ արտահանման օրվա, և միևնույն ժամանակ հարցը ներկայացնել ՄԳՄ: Անդամներից յուրաքանչյուրը ազատ է հարցը ՄԳՄ ներկայացնել մինչև 60 օրվա ժամկետի ավարտը: Յուրաքանչյուր դեպքում էլ ՄԳՄ-ն շտապ կարգով քննության է առնում հարցը, ներառյալ՝ լուրջ վնասի կամ դրա իրական վտանգի և դրա պատճառների որոշումը, և 30 օրվա ընթացքում համապատասխան հանձնարարականներ է տալիս խնդրո առարկա Անդամներին: Այդպիսի քննություն անցկացնելու համար ՄԳՄ-ն իր ձեռքի տակ պետք է ունենա ՄԳՄ նախագահին տրամադրված՝ 7-րդ կետում նշված փաստացի տվյալները, ինչպես նաև խնդրո առարկա Անդամների տրամադրած գործին առնչվող ցանկացած այլ տեղեկություններ:

11. Խիստ արտառոց ու ծայրահեղ պարագաներում, երբ հետաձգումը կարող է այնպիսի վնաս պատճառել, որը դժվար կլինի վերականգնել, 10-րդ կետով սահմանված գործողությունը կարող է կիրառվել ժամանակավորապես՝ այն պայմանով, որ խորհրդակցությունների անցկացման պահանջն ու ծանուցումը ՄԳՄ-ին ներկայացվում են այդ գործողությունը նախաձեռնելուց հետո՝ ոչ ավելի, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ խորհրդակցությունները համաձայնության չեն բերում, ՄԳՄ-ն այդ մասին ծանուցվում է խորհրդակցությունների եզրափակման ժամանակ, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ, քան գործողության իրականացման օրվանից 60 օր հետո: ՄԳՄ-ն շտապ կարգով քննության է առնում հարցը և 30 օրվա ընթացքում համապատասխան հանձնարարականներ է տալիս խնդրո առարկա Անդամներին: Այն դեպքում, երբ այդ խորհրդակցությունները բերում են համաձայնության, Անդամներն այդ մասին ՄԳՄ-ին ծանուցում են եզրափակումից հետո, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ, քան

գործողության իրականացման օրվանից 90 օր հետո: ՄՊՄ-ն խնդրո առարկա Անդամներին կարող է տալ այնպիսի հանձնարարականներ, ինչպիսիք անհրաժեշտ է համարում:

12. Անդամը սույն Հոդվածի դրույթների համաձայն վկայակոչված միջոցները կարող է պահպանել՝ ա) ընդհուպ մինչև 3 տարի՝ առանց երկարաձգման, կամ՝ բ) մինչև ՄԱԳ-Հ-1994-ին արտադրանքի միանալը, որը որ առաջինը կլինի:

13. Եթե սահմանափակման միջոցը մնում է ուժի մեջ մեկ տարվանից ավելի, ապա հետագա տարիների մակարդակը հավասար է առաջին տարվա համար հատկորոշած մակարդակին՝ մեծացրած տարեկան 6 տոկոսից ոչ պակաս աճի գործակցով, քանի դեռ այլ բան չի հիմնավորվել ՄՊՄ-ի առաջ: Տվյալ արտադրանքի համար սահմանափակման մակարդակը կարող է գերազանցվել ցանկացած երկու հաջորդական տարիներից որևէ մեկում՝ 10 տոկոսի առաջտեղափոխման և (կամ) հետտեղափոխման միջոցով, որտեղ առաջտեղափոխումը 5 տոկոսից ավելի չի կազմում: Քանակական սահմանափակում չի դրվում հետտեղափոխման. առաջտեղափոխման և 14-րդ կետի դրույթի զուգակցված կիրառման վրա:

14. Եթե մի Անդամ երկիր սույն Հոդվածի համաձայն սահմանափակում է դնում մեկ այլ Անդամ երկրից եկող մեկից ավելի արտադրանքների վրա, ապա այդ արտադրանքներից յուրաքանչյուրի նկատմամբ սույն Հոդվածի դրույթներով համաձայնեցված սահմանափակման մակարդակը, կարող է գերազանցվել 7 տոկոսով՝ պայմանով, որ սահմանափակման ենթակա ամբողջ արտահանումը չի գերազանցում սույն Հոդվածի համաձայն այդ կերպ սահմանափակված բոլոր արտադրանքների համար սահմանված մակարդակների ընդհանուր ծավալը՝ համաձայնեցված ընդհանուր միավորների հիմունքով: Եթե այդ արտադրանքների նկատմամբ սահմանափակումների կիրառման ժամանակահատվածները միմյանց հետ չեն համընկնում, ապա վրադրվող ցանկացած ժամանակահատվածի նկատմամբ սույն դրույթը կիրառվում է համամասնության հիմունքով:

15. Եթե սույն Հոդվածի համաձայն պաշտպանական գործողությունը կիրառվում է մի արտադրանքի նկատմամբ, որի համար նախկինում՝ ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուն նախորդող 12-ամսյա ժամանակահատվածում սահմանափակում է գործել ԲՄՀ-ի համաձայն կամ 2-րդ կամ 6-րդ Հոդվածի դրույթների համաձայն, ապա նոր սահմանափակման մակարդակը 8-րդ կետով նախատեսված մակարդակն է, եթե՝

ա) նոր սահմանափակումն ուժի մեջ չի մտել 2-րդ Հոդվածի 15-րդ կետում նշված նախորդ սահմանափակման վերացման վերաբերյալ ծանուցման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կամ՝

բ) նոր սահմանափակումն ուժի մեջ չի մտել սույն Հոդվածի կամ ԲՄՀ-ի դրույթների համաձայն կիրառված նախորդ սահմանափակման վերացման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում.

այդ դեպքում մակարդակը ավելի պակաս չպետք է լինի, քան հետևյալներից ավելի բարձրը՝ i) սահմանափակման մակարդակը վերջին 12-ամսյա ժամանակահատվածում, որի ընթացքում արտադրանքը ենթակա էր սահմանափակման, կամ՝ ii) 8-րդ կետով նախատեսված սահմանափակման մակարդակը:

16. Եթե Անդամը, որը 2-րդ Հոդվածով սահմանված սահմանափակում չի պահպանում, որոշում է սահմանափակում կիրառել սույն Հոդվածի դրույթների համաձայն, ապա այն համապատասխան համաձայնություններ է ձեռք բերում, որոնցով՝ ա) լիովին հաշվի են առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են արտահանման ու ներմուծման գործարքներում կանոնավոր առևտրային գործելակերպի հիման վրա սահմանված մաքսային դասակարգումն ու քանակական միավորները (և մանրաթելի բաղադրության, և իր ներքին շուկայում նույն հատվածի համար մրցակցելու առումով), և՛ բ) հնարավոր է դառնում խուսափել ապրանքատեսակի ընդգրկման չափազանցումից: 7-րդ և 11-րդ կետերում նշված խորհրդակցությունների պահանջը ներառում է սպառիչ տեղեկություններ այդ համաձայնությունների վերաբերյալ:

## Հոդված 7

1. Որպես միասնականացման գործընթացի մաս և հղվելով Ուրուգվայի փուլի արդյունքում Անդամների կողմից ստանձնած հատուկ պարտավորություններին՝ բոլոր Անդամները ձեռնարկում են այնպիսի գործողություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ՄԱԳ-Հ-1994-ի կանոններն ու հիմնադրույթները պահպանելու համար այնպես, որ.

ա) դեպի մասնաձգործական ու հագուստեղենի արտադրանքների շուկաներ մուտքի բարելավման հասնեն այնպիսի միջոցներով, ինչպիսիք են մաքսերի նվազեցումները և ամրագրումը, ոչ մաքսային արգելքների կրճատումը կամ վերացումը, մաքսային, վարչական ու լիցենզավորման ձևակառուցությունների պարզեցումը.

բ) ապահովեն մասնաձգործվածքների և հագուստեղենի առնչությամբ բարեխիղճ ու հավասար

- առևտրային պայմաններին վերաբերող միջոցների կիրառումն այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են գնագցման և հակագնագցման կանոնները և ընթացակարգերը, լրավճարներն ու փոխհատուցման միջոցները, և մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը, և՛
- զ) ընդհանուր առևտրային քաղաքականության նկատառումով միջոցներ ձեռնարկելիս խուսափեն մասնաձգործվածքների և հագուստեղենի բնագավառում ներմուծման նկատմամբ խտրականությունից:

Այդպիսի գործողություններով վնաս չի հասցվում Անդամների՝ ՄԱԳ-Հ-1994-ով սահմանված իրավունքներին ու պարտավորություններին:

2. Անդամները ՄԴՄ-ին ծանուցում են 1-ին կետում նշված այն գործողությունների մասին, որոնք առնչվում են սույն Համաձայնագրի իրականացմանը: Այնքնով, որքանով դրանք ծանուցվել են ԱՀԿ այլ մարմիններին, ամփոփագիրը, որում հղում է արված նախնական ծանուցագրին, բավարար է սույն կետում նշված պահանջների կատարման համար: Ցանկացած Անդամ ազատ է ՄԴՄ-ին հակադարձ ծանուցումներ կատարելու:

3. Եթե որևէ Անդամ համարում է, որ որևէ այլ Անդամ չի ձեռնարկել 1-ին կետում նշված գործողությունները, և որ խախտվել է սույն Համաձայնագրով սահմանված իրավունքների և պարտավորությունների հաշվեկշիռը, ապա այդ Անդամը կարող է հարցը ներկայացնել ԱՀԿ համապատասխան մարմիններին, և այդ մասին տեղյակ պահել ՄԴՄ-ին: ԱՀԿ համապատասխան մարմինների հետագա ցանկացած հայտնաբերումները կամ եզրակացությունները ՄԴՄ-ի համապարփակ զեկուցագրի մաս են կազմում:

## Հոդված 8

1. Սույն Համաձայնագրի իրականացումը վերահսկելու, սույն Համաձայնագրի համաձայն ձեռնարկված բոլոր միջոցներն ու Համաձայնագրի հետ դրանց համապատասխանությունը քննության առնելու և սույն Համաձայնագրով իրենից պահանջվող գործողությունները կատարելու համար սույնով ստեղծվում է Մասնաձգործվածքների հարցերով դիտանցող մարմին (ՄԴՄ): ՄԴՄ-ն կազմված է նախագահից և 10 անդամներից: Դրան անդամակցությունը հավասարակշռված պետք է լինի և լայնորեն ներկայացնի Անդամներին, և նախատեսի իր անդամների շրջափոխություն համապատասխան պարբերությամբ: Անդամներին նշանակում են Ապրանքների առևտրի խորհրդի կողմից ՄԴՄ-ում ծառայելու համար ընտրված Անդամները՝ իրենց գործառույթները կատարելով անձնային հիմունքով:

2. ՄԴՄ-ն մշակում է իր սեփական աշխատանքային ընթացակարգերը: Այնուամենայնիվ, հասկացվում է, որ ՄԴՄ-ում ընդհանուր համաձայնությունը համաձայնություն կամ աջակցություն չի պահանջում այն անդամներից, որոնց նշանակել են ՄԴՄ-ի քննարկմանը դրված չլուծված հարցում ներգրավված Անդամները:

3. ՄԴՄ-ն համարվում է մշտական մարմին և սույն Համաձայնագրով իրենից պահանջվող պարտականությունները կատարելու համար ժողովվում է ըստ անհրաժեշտության: Այն հենվում է Անդամների՝ սույն Համաձայնագրի համապատասխան Հոդվածների համաձայն ներկայացրած ծանուցումների և տեղեկությունների վրա՝ լրացված հավելյալ տեղեկություններով կամ անհրաժեշտ մանրամասներով, որ նրանք կարող են ներկայացնել, կամ էլ այն կարող է որոշել պահանջել նրանցից: Այն կարող է նաև հիմնվել ԱՀԿ այլ մարմիններին ներկայացված ծանուցումների և դրանց ու այդպիսի այլ աղբյուրներից ստացած զեկուցագրերի վրա, որոնք որ նպատակահարմար կգտնի:

4. Անդամները սույն Համաձայնագրի գործողության վրա ազդեցություն ունեցող ցանկացած հարցի շուրջ խորհրդակցությունների անցկացման համապատասխան հնարավորություն են տալիս միմյանց:

5. Սույն Համաձայնագրով նախատեսված երկկողմ խորհրդակցությունների արդյունքում որևէ փոխհամաձայնեցված լուծման չհասնելու դեպքում ՄԴՄ-ն որևէ Անդամի պահանջով և հարցը հիմնավոր ու շտապ կարգով քննարկելուց հետո հանձնարարականներ է տալիս խնդրո առարկա Անդամներին:

6. Ցանկացած Անդամի պահանջով ՄԴՄ-ն շտապ կարգով վերանայում է ցանկացած առանձին հարց, որն այդ Անդամը համարում է, որ սույն Համաձայնագրի համաձայն վնասում է իր շահերը, և որի շուրջ անցկացված խորհրդակցությունները չեն հանգեցրել իր և խնդրո առարկա Անդամի կամ Անդամների միջև փոխադարձ գոհացուցիչ լուծման: ՄԴՄ-ն կարող է այդ հարցերի վերաբերյալ այնպիսի դիտարկումներ անել, ինչպիսիք անհրաժեշտ է գտնում խնդրո առարկա Անդամների և 11-րդ կետով նախատեսված վերաքննության նպատակների համար:

7. Նախքան իր հանձնարարականները կամ դիտարկումները ձևակերպելը ՄԴՄ-ն մասնակցության համար հրավիրում է այն Անդամներին, որոնց վրա քննարկվող հարցը կարող է ուղղակի ազդեցություն ունենալ:

8. ՄԴՄ-ին հանձնարարականներ տալու կամ հայտնաբերումներ անելու համար դիմելու դեպքում գերադասելի է, որ այն 30-օրյա ժամկետում անի այդ եթե սույն Համաձայնագրում որևէ այլ ժամկետ չի հատկորոշված: Գործին ուղղակիորեն առնչվող Անդամները տեղեկացվում են բոլոր այդպիսի հանձնարարականների կամ հայտնաբերումների մասին: Բոլոր այդպիսի հանձնարարականները կամ հայտնաբերումները տեղեկատվության նպատակով հաղորդվում են նաև Ապրանքների առևտրի խորհրդին:

9. Անդամները ձգտում են ամբողջությամբ ընդունել ՄԴՄ-ի հանձնարարականները, որն իրականացնում է այդ հանձնարարականների կատարման պատշաճ հսկողությունը:

10. Եթե որևէ Անդամ իրեն անկարող է համարում ենթարկվել ՄԴՄ-ի հանձնարարականներին, ապա այդպիսի հանձնարարականներ ստանալուց ոչ ուշ, քան մեկ ամիս հետո ՄԴՄ-ին տեղեկացնում է դրա պատճառների մասին: Տրված պատճառների հիմնավոր քննարկումից հետո ՄԴՄ-ն տալիս է ցանկացած հետագա հանձնարարականներ, որոնք որ տվյալ պահին անհրաժեշտ է համարում: Եթե այդ հետագա հանձնարարականներից հետո խնդիրը մնում է չլուծված, Անդամներից յուրաքանչյուրը կարող է այդ խնդիրը ներկայացնել Վեճերի կարգավորման մարմին և վկայակոչել ՄԱԳ-Հ-1994-ի XXIII Հոդվածի 2-րդ կետը և Վեճերի կարգավորման փոխհամաձայնության համապատասխան դրույթները:

11. Սույն Համաձայնագրի իրականացումը վերահսկելու նպատակով Ապրանքների Առևտրի Խորհուրդը միասնականացման գործընթացի յուրաքանչյուր փուլի ավարտից առաջ անց է կացնում հիմնական վերաքննություն: Այդ վերաքննությանն աջակցելու համար ՄԴՄ-ն յուրաքանչյուր փուլի ավարտից առնվազն հինգ ամիս առաջ, Ապրանքների առևտրի խորհրդին փոխանցում է համապարփակ զեկուցագիր վերաքննության ենթակա փուլում սույն Համաձայնագրի իրականացման վերաբերյալ, մասնավորապես՝ միասնականացման գործընթացի, անցումային պաշտպանական գործակառույցի կիրառման հարցերի մասով և համապատասխանաբար ՄԱԳ-Հ-1994-ի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 7-րդ Հոդվածներով սահմանված կանոնների և հիմնադրույթների կիրառման առնչությամբ: ՄԴՄ-ի համապարփակ զեկուցագրում կարող են ընդգրկվել հանձնարարականներ, որոնք ՄԴՄ-ն նպատակահարմար է գտնում Ապրանքների առևտրի խորհրդի համար:

12. Իր անցկացրած վերաքննությունից ելնելով Ապրանքների առևտրի խորհուրդը ընդհանուր համաձայնությամբ կայացնում է այնպիսի որոշումներ, ինչպիսիք անհրաժեշտ է համարում երաշխավորելու համար, որ սույն Համաձայնագրով ամրագրված իրավունքների և պարտավորությունների հավասարակշռությունը չխախտվի: Ցանկացած վեճի լուծման նպատակով, որը կարող է ծագել 7-րդ Հոդվածում նշված հարցերի կապակցությամբ, Վեճերի կարգավորման մարմինը, չխախտելով 9-րդ Հոդվածում նշված վերջնական ժամկետը, կարող է, ցանկացած Անդամի առնչությամբ, որը համարվում է, որ չի կատարել սույն Համաձայնագրով սահմանված իր պարտականությունները, թույլատրել ճշգրտում կատարել 2-րդ Հոդվածի 14-րդ կետում՝ վերաքննությանը հաջորդող փուլի համար:

## Հոդված 9

Սույն Համաձայնագիրը և դրա տակ ընկած բոլոր սահմանափակումները դադարում են գործելուց ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ գտնվելու 121-րդ ամսվա առաջին օրը. այդ օրվանից մասնաձագործվածքների և հագուստեղենի բնագավառը ամբողջովին միասնականացվում է ՄԱԳ-Հ-1994-ի հետ: Սույն Համաձայնագիրը երկարաձգման ենթակա չէ:

## ՀԱՎԵԼՎԱԾ

### ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Սույն Հավելվածում թվարկվում են մանածագործական ու հագուստեղենի արտադրանքներ, որոնք սահմանված են Ապրանքների նկարագրության և ծածկագրման ներդաշնակեցված համակարգի (ՆՀ) ծածկագրերով՝ վեցանիշ մակարդակով:

2. 6-րդ Հոդվածի պաշտպանական միջոցներին վերաբերող դրույթներով սահմանված գործողությունները կձեռնարկվեն մանածագործական ու հագուստեղենի առանձին արտադրանքների առնչությամբ և ոչ թե ինքնին ՆՀ առանձին հոդվածների հիմունքով:

3. Սույն Համաձայնագրի 6-րդ Հոդվածի պաշտպանական միջոցներին վերաբերող դրույթներով սահմանված գործողությունները չեն կիրառվում.

ա) զարգացող Անդամ երկրների տնայնագործական արտադրանքային ջուլիակահաստոցով պատրաստված գործվածքների կամ դրանցից պատրաստված ձեռագործական տնայնագործական արտադրանքային արտադրանքների կամ ժողովրդական ավանդական արհեստին վերաբերող մանածագործական ու հագուստեղենի արտադրանքների արտահանման նկատմամբ, եթե այդ արտադրանքները պատշաճ կերպով հավաստագրված են ըստ խնդրո առարկա Անդամների միջև կայացած համաձայնությունների.

բ) պատմականորեն առևտրի առարկա հանդիսացող մանածագործական արտադրանքների նկատմամբ, որոնք միջազգային առևտրում առևտրային նշանակալի քանակներով փոխանակվել են մինչև 1982թ., ինչպիսիք են պայուսակները, պարկերը, գորգերի հենքերը, պարանասարքերը, ճանապարհորդական իրերը, ուղեգորգերը, խսիրները և գորգերը, որոնք սովորաբար պատրաստվում են այնպիսի թելերից, որոնք ստացված են ջութից, կոկոսից, կանեփից, արակայից, մագուեյից և հենքեքենից.

գ) մաքուր մետաքսից պատրաստված արտադրանքների նկատմամբ:

Այդ արտադրանքների նկատմամբ կիրառելի են ՄԱԳ-Հ-1994-ի Հոդված XIX-ի դրույթները, ինչպես դրանք մեկնաբանված են Պաշտպանական միջոցների մասին համաձայնագրում:

**Ապրանքների նկարագրության ու ծածկագրման ներդաշնակեցված համակարգի (ՆՀ)  
Անվանակարգման XI Մասում («Մանածագործվածքներ և մանածագործական  
պարագաներ») ընդգրկված արտադրանքներ**

ՆՀ No.

Ապրանքի նկարագրություն

**Բաժին 50 Մետաքս**

- 5004.00 Մետաքսյա թել (բացառությամբ մետաքսի մնացորդներից ոլորած մանվածքից), մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարած
- 5005.00 Ոլորած միաթել մանվածք մետաքսի մնացորդներից, մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարած
- 5006.00 Մետաքսյա թել և մետաքսի մնացորդներից ոլորած միաթել մանվածք, մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարված. մետաքսյա աղելար
- 5007.10 Գործվածք՝ մետաքսի սանրագգվածքից
- 5007.20 Գործվածք՝ զանգվածում 85% կամ ավելի մետաքսի կամ մետաքսի մնացորդների պարունակությամբ, բացառությամբ մետաքսի սանրագգվածքից
- 500790 Մետաքսյա գործվածք, այլ տեղում չնշված

**Բաժին 51. Բրդից, կենդանիների նուրբ(կոշտ) բրդից, ձիու մազից մանվածք և գործվածք**

- 5105.10 Մեքենայական մանվածքի բուրդ
- 5105.21 Սանրագգած բրդի կտորտանք
- 5105.29 Սանրավոր բրդյա ժապավեն եւ այլ սանրագգած բուրդ, բացի սանրագգած բրդի կտորտանքը
- 5105.30 Կենդանիների նուրբ բուրդ, սանրագգած կամ սանդեղբագգած
